

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ
Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

ԵՄԽՀ-ի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ընդհանուր դրույթներ

Սահմանելով կրթության որակի քաղաքականությունը՝ Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանը առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ «Կրթության մասին» օրենքով, համալսարանի կանոնադրությունով, ինչպես նաև Բոլոնիայի հռչակագրին անդամակցված երկրներին ուղղված Բեռլինի և Բերգենի կոմյունիկեներով, որտեղ կոչ է արվում ստեղծել ներդաշնակություն եվրոպական երկրների բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգերում:

Այն համահունչ է ՀՀ կրթական քաղաքականության գլխավոր խնդրին՝ ապահովել կրթության բարձր որակ՝ հիմքում պահպանելով նրա հիմնարարությունն ու համապատասխանությունը անհատի, հասարակության և պետության այժմեական և հեռանկարային պահանջներին:

2. Կրթության որակի բնագավառում ԵՄԽՀ-ի գործունեության նպատակը

Կրթության որակի բնագավառում ԵՄԽՀ-ի գործունեության նպատակն է ապահովել բուհի բարձր մրցունակությունը կրթական ծառայությունների շուկայում, զարգացնել համալսարանի ներուժը կրթական և գիտական գործունեության ավանդական բնագավառներում՝ շնորհիվ բարձրորակ մասնագետների պատրաստման, որը որոշվում է նրանց մասնագիտական իմացությամբ, հմտություններով ու կարողություններով, սկզբունքային քաղաքացիական դիրքորոշմամբ և բարոյական բարձր որակներով: Որակի ապահովման բնագավառում համալսարանի քաղաքականությունն ուղղված է իր առջև դրված նպատակի իրականացմանը՝ հետևյալ խնդիրների լուծման ճանապարհով.

- մշակել և ներդնել որակի կառավարման արդյունավետ համակարգ, որը կապահովի կրթական գործունեության որակի անընդհատ բարելավումը,
- ապահովել պայմաններ պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ անձնակազմի որակավորումների բարձրացման և մասնագիտական վարպետության աճի համար: Ստեղծել բուհի աշխատակիցների անհատական գնահատման համակարգ,
- դիմորդներին ապահովել ընդունելության կանոնակարգերի ուղեցույցներով,
- վերհանել ուսանողների կրթական կարիքները՝ որակյալ կրթական ծառայություններ մատուցելու և արդյունավետ կրթական միջավայր ապահովելու նպատակով,
- մշակել, իրականացնել և մշտապես կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ,
- անընդհատ բարձրացնել կրթական գործընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական ապահովվածության մակարդակը,
- մեծացնել համալսարանի գիտահետազոտական և նորարարական գործունեության ծավալն ու ասպարեզները՝ որպես հիմք լրացուցիչ ռեսուրսների ներգրավման, անձնակազմի որակավորման և պրակտիկ

- հմտությունների բարձրացման, բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման և կրթական գործընթացի բարելավման նպատակով,
- որակի ապահովման բնագավառում ստեղծել մշտական մասնագիտական ուսուցման համակարգ բոլոր աշխատակիցների համար: Կատարելագործել կառավարման համակարգը՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ,
 - կատարելագործել կրթօջախի նյութական և ֆինանսական ապահովման համակարգը, ինչպես նաև աշխատակիցների և ուսանողների սոցիալական պաշտպանվածությունը,
 - վերանայել համալսարանի քաղաքականությունը կրթության որակի բնագավառում՝ հաշվի առնելով ուսանողների վերհանված կրթական կարիքները և համապատասխան լուծումները:

Նպատակի իրականացումը ենթադրում է.

- ✓ կրթական ծառայությունների որակից ուսանողների բավարարվածություն,
- ✓ կիրառական գիտությունների զարգացում, մրցունակ գիտատեխնիկական և ժողովրդական արհեստների բարձրարվեստ ցուցանմուշների ստեղծում,
- ✓ գիտամանկավարժական բարձր որակավորման կադրերի վերապատրաստման արդյունավետություն,
- ✓ նոր կրթական տեխնոլոգիաների և գիտական գործունեության արդյունքների ներդրման և արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,
- ✓ համալսարանական ընդհանուր՝ մասնավորապես որակի մշակույթի զարգացում և հասարակության մեջ բուհի հեղինակության բարձրացում:

Արտահայտելով իր նվիրվածությունը որակի կառավարման սկզբունքներին, առաջնորդվելով Որակի ապահովման Եվրոպական ուղենիշներով և չափորոշիչներով (ESG) և ISO 9 0 0 0 – 2 0 0 0 չափորոշիչներով՝ համալսարանի ղեկավարությունը գիտակցում է, որ որակի ապահովման համակարգի մշակումը, ներդրումը և մշտական կատարելագործումը բուհի առաջնահերթ խնդիրներն են մոտակա ժամանակահատվածի համար: Այն կապահովի համալսարանի մրցունակությունը և կայունությունը կրթական ծառայությունների շուկայում, գիտական և նորարարական գործունեությունը, ֆինանսական ցուցանիշների աճը, հետևաբար բուհի աշխատակիցների և շահակից կողմերի բավարարվածությունը և վստահությունը ապագայի նկատմամբ:

Համալսարանի ղեկավարությունը պետք է ապահովի, որ իր բոլոր աշխատակիցները ծանոթ լինեն և ընդունեն սույն քաղաքականությունը, ինչպես նաև մասնակցեն նրա արդյունավետ իրականացմանը: Քաղաքականությունը պետք է իրականացվի կառավարման բոլոր աստիճաններում և ենթարկվի վերլուծության, անհրաժեշտության դեպքում՝ վերանայման, իսկ համալսարանի յուրաքանչյուր աշխատակից իր իրավասությունների սահմաններում կրում է անձնական պատասխանատվություն իր աշխատանքի որակի համար:

Մենք հասկանում ենք, որ մեր աշխատանքի որակից, սպառողի բավարարվածությունից է կախված բուհի բարօրությունը և նրա աշխատակիցների բարեկեցությունը: